350 Fifth Avenue, 34th Floor
New York, NY 10118-3299
Tel: +1-212-290-4700
Fax: +1-212-736-1300; 917-591-3452

Europe and Central Asia Division
Hugh Williamson, *Director*
Rachel Denber, *Deputy Director*
Benjamin Ward, *Deputy Director*
Veronika L. Szente Goldston, *Advocacy Director*
Jane Buchanan, *Associate Director*
Tanya Lokshina, *Russia Program Director*
Inna Khodzhaeva, *Moscow Office Director*
Giorgi Gogia, *Senior Researcher*
Emma Sinclair-Webb, Senior *Researcher*
Judith Sunderland, *Senior Researcher*
Tanya Cooper, *Researcher*
Lydia Gall, *Researcher*
Yulia Gorbunova, *Researcher*
Izza Leghtas, *Researcher*
Mihra Rittmann, *Researcher*
Steve Swerdlow, *Researcher*
Eva Cossé, *Research Assistant*
Viktoriya Kim, *Senior Coordinator*
Kathryn Zehr, *Associate*
Anze Mocilnik, *Associate*

ADVISORY **Committee**
Catherine Zennström, *Chair*
Jean-Paul Marthoz, *Vice-chair*
Henri Barkey
Gerhart Baum
Rudolf Bindig
Alexander **Cooley**
Stephen Del Rosso
Felice Gaer
Michael Gellert
Alice H. Henkin
Jeri Laber
Walter Link
Masha Lipman
Helena Luczywo
Kimberly Marteau Emerson
Jane Olson
László Jakab Orsós
Arjan Overwater
Can Paker
Signe Rossbach
Colette Shulman
Leon Sigal
Malcolm Smith
Mark von Hagen
Joanna Weschler
Tana de Zulueta

Human Rights Watch
Kenneth Roth, *Executive Director*
Michele Alexander, *Deputy Executive Director, Development and Global Initiatives*
Carroll Bogert, *Deputy Executive Director, External Relations*
Iain Levine, *Deputy Executive Director, Program*
Chuck Lustig, *Deputy Executive Director, Operations*
Bruno Stagno Ugarte, *Deputy Executive Director, Advocacy*

HUMAN RIGHTS WATCH

HRW.org

5-ը հունվարի, 2016թ.

ՀՀ գլխավոր դատախազ
պարոն Գևորգ Կոստանյանին
ՀՀ ք. Երևան, 0010 Վազգեն Սարգսյան փ. 5

Հարգելի պարոն Կոստանյան,

Թույլ տվեք ողջունել Ձեզ Human Rights Watch-ի անունից: Սույն գրությամբ ցանկանում ենք բարձրաձայնել «Նոր Հայաստան Շարժում» քաղաքական խմբավորման անդամ Գևորգ Սաֆարյանի նկատմամբ կիրառված նախնական կալանքի վերաբերյալ, և կոչ անել Ձեր գրասենյակին՝ քայլեր ձեռնարկել նրա իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

Ինչպես գիտեք, Human Rights Watch-ը միջազգային, անկողմնակալ, հասարակական կազմակերպություն է, որն ամբողջ աշխարհում ջատագովում է հարգանք՝ մարդու իրավունքների նկատմամբ: Մենք աշխատել ենք մարդու իրավունքների հարցերի շուրջ Հայաստանում և ավելի քան երկու տասնամյակ ՀՀ Կառավարության հետ գտնվում ենք կանոնավոր երկխոսության մեջ:

Ոստիկանությունը Երևանում ձերբակալել է Սաֆարյանին 2016 թվականի հունվարի 1-ի ժամը 1:00-ի սահմաններում՝ «Նոր Հայաստան Շարժման» անդամների կողմից կազմակերպված հրապարակային միջոցառման ընթացքում: Կազմակերպիչները նախապես տեղեկացրել էին քաղաքային իշխանություններին Ազատության հրապարակում Ամանորյա տոնակատարություն անցկացնելու իրենց պլանների մասին: Չնայած նրան, որ հավաքվել էին ընդամենը մի քանի տասնյակ մասնակիցներ, հրապարակում առկա էր իրավապահ մարմինների լուրջ ներկայություն: Երբ մասնակիցները, ամանորյա հանդերձներով զգեստավորված, փորձել են հրապարակում տեղադրել փոքր տոնածառ, ոստիկանները միջամտել և առգրավվել են տոնածառը՝ ներկաներին ասելով, որ իրենց թույլ չէր տրվել հրապարակ բերել այդպիսի ծառեր: Երբ Սաֆարյանը և ուրիշներ հրապարակ են վերադարձել տոնածառի տպավորություն թողնող զգեստով մի մարդու հետ, քաշքշուկ է բռնկվել ոստիկանության և միջոցառման որոշ մասնակիցների միջև, ոստիկանությունը ձերբակալել է Սաֆարյանին և ուրիշների:

Ոստիկանությունը ձերբակալել է Սաֆարյանին և մեղադրանք

առաջադրել ոստիկանի նկատմամբ բռնություն կիրառելու մասով (Քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մաս՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը), որը կարող է պատժվել մինչև հինգ տարվա ազատազրկմամբ: Ոստիկանությունն ազատ է արձակել մյուս ձերբակալվածներին: Հունվարի 3-ին դատարանը բավարարել է ոստիկանության քննիչի միջնորդությունը՝ երկու ամիս նախնական կալանքը որպես Սաֆարյանի խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Նույն օրը, Սաֆարյանը տեղափոխվել է Նուբարաշեն ՔԿՀ, Երևան: Սաֆարյանի փաստաբանը պատրաստվում է բողոքարկել այդ որոշումը:

Human Rights Watch- ը մտահոգված է, որ նախաքննության ընթացքում Սաֆարյանն ազատությունից զրկվել է երկու ամսով: Դատարանը նախնական կալանքի իր որոշումը հիմնավորել է Սաֆարյանի դեմ ընթացող առանձին քրեական վարույթի առկայությամբ: Սաֆարյանի նկատմամբ հետաքննություն էր սկսվել 2015թ.-ի ապրիլից, զանգվածային անկարգություններ նախապատրաստելու մեղադրանքով, և արդեն ազատ էր արձակվել նախնական կալանքից՝ տալով ստորագրություն չհեռանալու մասին: Առանց անդրադառնալու նոր մեղադրանքների էությանը՝ դատարանը հունվարի 3-ին հայտարարել է, որ Սաֆարյանը կարող է կրկնակի հանցագործություն կատարել, եթե ազատ արձակվի:

Ինչպես գիտեք, նախնական կալանքը պետք է դիտարկել որպես վերջին հանգրվան: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ), որին միացել է նաև Հայաստանը, Հոդված 9 (3)-ը նշում է, որ «Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելը ընդհանուր կանոն չպետք է լինի»: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, որը ներկայացնում է դրույթի հեղինակավոր մեկնաբանությունը, սահմանում է, որ գրավը պետք է կիրառվի, բացառությամբ այն դեպքերի, որտեղ կա հավանականություն, որ մեղադրյալը կարող է դիմել փախուստի, ոչնչացնել ապացույցները կամ ազդեցություն գործել վկաների վրա: Հաշվի առնելով միջադեպի ոչ նշանակալի բնույթը, որը նշված է ձերբակալման հիմքում, մենք կարծում ենք, որ Սաֆարյանը պետք է ազատ արձակվի մինչև քննությունը:

Երկու ամսով ազատազրկումը լուրջ սահմանափակում է հանդիսանում Սաֆարյանի նկատմամբ, որն ամբողջությամբ չարդարացված է փաստերի կամ միջազգային չափանիշների տեսանկյունից և անհամաչափ՝ հաշվի առնելով նրա կողմից հետաքննությանը սպառնացող որևէ իրական ռիսկերի բացակայությունը: Human Rights Watch-ը մտահոգված է, որ իրականում իշխանությունները Սաֆարյանին որպես թիրախ են ընտրել ընդդիմադիր քաղաքական խմբում իր անդամակցության և նրա խաղաղ քաղաքական համոզմունքների համար, և որ սահմանված խափանման միջոցը միտված է միջամտելու նրա մտքի, խոսքի և հավաքների ազատության իրավունքին, որոնք պաշտպանվում են ՔՔԻՄԴ-ով:

Ինչպես վերը նշվեց, Սաֆարյանը նաև կանգնած է զանգվածային անկարգություն նախապատրաստելու մեղադրանքի առջև, ի հետևանք քաղաքական հանրահավաքի, որն ըստ նրա պլանավորման պետք է համընկներ 2015թ. ապրիլի 24-ի միջոցառումների հետ՝ նվիրված 1915թ. Հայոց ցեղասպանությանը: 2015թ. ապրիլի 27-

ին Ձեզ հասցեագրված նամակում, Human Rights Watch-ը մտահոգություն էր հայտնել, որ Սաֆարյանի և միջոցառման պլանավորման մեջ ներգրավված չորս այլ ակտիվիստներին առաջադրված մեղադրանքները կարող են դիտարկվել որպես միջամտություն ակտիվիստների մտքի, խոսքի և հավաքների ազատության իրավունքներին: Մեր նամակում մենք խնդրել էինք, որ մեղադրանքները վերանայվեն և որ ակտիվիստներն ազատ արձակվեն՝ մինչև անհապաղ, անկողմնակալ և վստահելի հետաքննության ավարտը: Ակտիվիստներին նախնական կալանքից ազատ արձակելուց հետո, մենք մամլո հաղորդագրություն հրապարակեցինք՝ որակելով նրանց ազատ արձակելու որոշումը որպես «դրական քայլ»:

Մենք կոչ ենք անում Ձեզ՝ ազատ արձակել Սաֆարյանին, մինչև 2016թ. հունվարի 1-ի միջադեպի մեղադրանքների անհապաղ, անաչառ և վստահելի քննության ավարտը: Մենք նաև պահանջում ենք, որ Դուք առանձին ուսումնասիրության առնեք ոստիկանությանը տրված հրահանգները միջոցառման ընթացքում իրավապահների ներկայացվածության չափի, ներգրավվածության ժամկետների, միջոցառման մասնակիցների նկատմամբ սահմանված որևէ սահմանափակումների կամ պայմանների, այդ թվում կապված զարդերի և հանդերձների հետ, և արդյո՞ք այդ պայմանները ողջամիտ էին ու նախապես հստակ ներկայացված:

Շնորհակալություն այս նամակի նկատմամբ Ձեր ուշադրության համար:

Հարգանքներով,



Հյու Ուիլիամսոն
Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի
բաժնի ղեկավար
Human Rights Watch